ՀՏԴ 343.9
Իրավագիտություն

Տաթևիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԱրՊՀ իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԴ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՈՒՄԸ

Բանալի բառեր՝ հանցակազմ, հանցագործությունների համակցություն, բարդ հանցագործություններ, հանցագործություն-եղանակ, որակում:

Т. Геворгян

СОВОКУПНОСТЬ ПРЕСТУПЛЕНИЙ И КВАЛИФИКАЦИЯ СЛОЖНЫХ ПРЕСТУПЛЕНИЙ.

В статье рассматриваются проблемы по квалификации сложных преступлений и совокупности преступлений. Уголовный кодекс предусматривает довольно значительное число сложных преступлений, которые совершаются посредством других преступлений-способов. Они, разумеется, всегда ниже по категории, чем основные преступления. Наиболее распространены три вида преступлений-способов: насилие, использование служебных полномочий и использование подложного документа.

Были выявлены все возможные проблемы и недостатки, касающиеся и практики, и законодательной сферы. Так же были сделаны предложения, которые в дальнейшем могли бы способствовать решению этих проблем и усовершенствованию данного института.

Ключевые слова: *состав преступления, совокупность преступлений, сложные преступления, преступление - способ, квалификация.*

T. Gevorkyan

AGGREGATE OF CRIMES AND QUALIFICATION OF COMPLEX CRIMES

The article considers some problems related to the qualification of complex crimes and aggregate of crimes. The Criminal Code provides quite a number of complex crimes which are committed through other crimes-methods. They are certainly lower in category than the main crimes. Three crime-methods are the most prevalent: violence, the use of official position and the use of forged documents.

All possible problems and shortcomings both in practice and the legislative sphere have been identified. Also, suggestions were made that could further contribute to solution of these problems and improving the institution.

Keywords: *elements of crime, aggregate of crimes, complex crimes, crime-methods, qualification.*

ՌԴ Քրեական օրենսգիրքը նախատեսում է բարդ հանցագործությունների բավականին շատ տեսակներ, որոնք կատարվում են հանցագործություն –եղանակների միջոցով: Առավել տարածված են հանցագործություն-եղանակների երեք տեսակ՝ բռնությունը, պաշտոնեական լիազորությունների օգտագործումը և կեղծ փաստաթղթերի օգտագործումը:

Ճիշտ է Վ. Ն. Կուդրյավցևը, ըստ որի, եթե հանցագործության եղանակը նախատեսված է որպես ինքնուրույն հանցագործություն, այն չի մեղսագրվում հիմնական հանցագործությունից առանձին. հանցագործություն–եղանակը չի կարող համակցությամբ որակվել: Նման դեպքերում առաջ են գալիս մեկ բարդ հանցագործությունը մեկ պարզ հանցագործությունից սահմանազատելու հարցերը:

Բռնությունը՝ որպես հանցագործության եղանակ, որը ոտնձգություն է առողջության, սեռական անձեռնմխելիության, հասարակական անվտանգության նկատմամբ, քրեական օրենսգրքի մեջ ձևակերպվում է տարբեր ձևերով: Բռնության բովանդակությունը որոշելու համար պահանջվում է իրավակիրառ և դատական մեկնաբանություն:

Օրենսդիրը բազմիցս օգտագործում է հետևյալ բառային շրջադարձները.[1] «բռնության գործադրմամբ» (հոդ. 365, մ. 2 —ցուցմունք տալուն հարկադրելը, մ. 3-բռնության գործադրմամբ), «բռնության կամ նրա սպառնալիքի գործադրմամբ» (հոդ. 167 —հավաքներ անցկացնելուն կամ դրանց մասնակցելուն խոչընդոտելը), «կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնության կամ նրա սպառնալիքի գործադրմամբ» (հոդ.. 182 — կողոպուտ), «կյանքի ու առողջության համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության սպառնալիքի գործադրմամբ» (հոդ. 181, մ. 1 — ավազակային հարձակում)[2]:

Որակման համար առավել մեծ դժվարություն է ներկայացնում չկոնկրետավորված բռնության մեկնաբանությունը: Արդյո՞ք այն ընդգրկում է միայն ֆիզիկական բռնությունը, թե նաև դրա կիրառման սպառնալիքը: Քրեական օրենսգրքի հոդվածների ճնշող մեծամասնության մեջ ֆիզիկական և հոգեկան բռնությունները (սպառնալիքը) ձևակերպվում են առանձին: Դրա հետ մեկտեղ տեսության և գիտագործնական մեկնաբանությունների մեջ բռնությունը ընդունված է հասկանալ և՛ որպես

---

[1] *См. подробнее:* ***Шарапов Р.Д.*** *Физическое насилие в уголовном праве. СПб., 2001. С. 274–296.*

[2] *ԼՂՀ քրեական օրենսգիրք*

ֆիզիկական, և՛ որպես հոգեկան բռնություն: Կարծում ենք, որ դա ողջամիտ է:

Բռնության նպատակը տուժողի դիմադրությունը կոտրելն է: Որպես կանոն՝ զոհի վրա սկզբում կիրառում են հոգեկան ազդեցություն: Եվ եթե այն բավարար է հանցավոր նպատակին հասնելու համար (շորթման ժամանակ գույքը փոխանցելը, բռնաբարության ժամանակ զոհի դիմադրությունը ճնշելը), հանցավորի համար արդեն ֆիզիկական բռնությանն անցնելու իմաստ չկա:

Դրա հետ կապված՝ կարծում ենք, որ եթե քրեական օրենսգրքի մեջ օգտագործված է «բռնություն» ընդհանուր եզրույթը, ապա այն պետք է հասկանալ և՛ որպես ֆիզիկական, և որպես հոգեկան բռնություն: Չնայած, իհարկե, տերմինաբանական խառնաշփոթը բացառելու համար, որն անխուսափելիորեն ծնում է որակման սխալներ, ավելի ճիշտ կլիներ ձևակերպել «բռնությամբ կամ նրա գործադրման սպառնալիքով»:

Հանցագործության ճիշտ որակման համար պահանջվում է չկոնկրետավորված ֆիզիկական բռնության բովանդակության պարզաբանում: Այն դրսևորվում է կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնության ձևով: Օրինակ՝ թեթև մարմնական վնասվածքը, որը չի հանգեցնում առողջության քայքայման, չի հարուցում առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության կայուն կորուստ. ծեծը, խոշտանգումը կամ առողջության և կյանքի համար վտանգավոր բռնության ձևով, օրինակ, դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը որը առաջացրել է առողջության կարճատև քայքայում կամ ընդհանուր աշխատունակության աննշան կայուն կորուստ. դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը և բռնության այդ տեսակներին համապատասխան վնասներ պատճառելու սպառնալիքը, որը վտանգավոր է կյանքի ու առողջության համար:

Առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելը (ՔՕ հոդ. 111) մտնում է ծանր հանցագործությունների մեջ: Այդ կապակցությամբ այն չի կարող կատարել հանցագործություն-եղանակի դեր առաջին, երկրորդ և երրորդ կատեգորիաների հանցագործությունների մեջ: Առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու որակյալ և առանձնապես որակյալ հանցակազմերը վերաբերում են չորրորդ կարգի՝ առանձնապես ծանր հանցագործություններին, ուստի և ընդհանրապես բացառվում է այս հանցատեսակի հանցագործություն – եղանակի դերը այդ կատեգորիայի հանցագործություններում:

Օրինակ՝ ավազակության հասարակ հանցակազմը ընդգրկում է առողջությանը թեթև և միջին ծանրության վնաս պատճառել: Հոգեկան բռնությունը կարող է լինել բռնության սպառնալիք, որը վտանգավոր է կյանքի ու առողջության համար: Եթե ավազակություն կատարելու ժամանակ բռնությունը ուղեկցվել է առողջությանը ծանր վնաս

պատճառելով, ապա արարքը որակվում է ՔՕ հոդ. 181, մ. 3, կ. 3: Եթե ավազակության առանձնապես որակյալ այդ տեսակը նախատեսված չլիներ այդ նորմի մեջ, ապա որակումը պետք է իրականացվեր ըստ ավազակության և առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու համակցության (ինչն ավելի ճիշտ կլիներ):

Այնպիսի հանցագործությունները, որոնք կատարվում են պաշտոնական լիազորությունները չարաշահելով, այնքան էլ քիչ չեն: Երբ քրեական օրենսգրքի հոդվածի մեջ նշված է միայն ընդհանուր սուբյեկտը, իսկ հանցագործություն-եղանակը նշված չէ, փաստացի այն կարող է կատարվել նաև հատուկ սուբյեկտի կողմից, մասնավորապես պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնեական լիազորությունները օգտագործելով: Այս պարագայում պահանջվում է որոշել՝ արդյո՞ք առկա է միասնական բարդ հանցակազմ, թե հանցագործությունների համակցություն: Օրինակ՝ քրեական օրենսգրքի 160 հոդվածում նախատեսված է պատասխանատվություն հոի կնոջը կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձին աշխատանքի ընդունելուց անհիմն հրաժարվելու կամ աշխատանքից անհիմն ազատելու համար: Չնայած այս հոդվածում նշված չեն հատուկ սուբյեկտը և նրա կողմից «իր ծառայողական դիրքի օգտագործմամբ» հանցագործություն-եղանակը, բայց դրանք ակնհայտ են: Միայն պաշտոնատար անձը կարող է կատարել նշված արարքները՝ չարաշահելով իր ծառայողական լիազորությունները կամ գերազանցելով դրանք:

Շատ դեպքերում հանցանքը կատարվում է փաստաթղթեր կեղծելու կամ կեղծ փաստաթուղթ օգտագործելու միջոցով: Հարց է առաջանում, թե դա պե՞տք է արդյոք համակցությամբ որակել:

Որոշ հեղինակներ բացառում են համակցությունը, մյուսները կարծում են, որ դա հնարավոր է: Այսպես՝ Վ.Ն. Կուդրյավցևը համարում է, որ փաստաթուղթ կեղծելը միշտ պետք է որակվի որպես ինքնուրույն հանցագործություն՝ համակցության կանոններով [1]:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է տարբերել ֆիզիկական կամ ինտելեկտուալ կեղծիքը և կեղծ փաստաթղթերի օգտագործումը՝ այս կամ այն հանցագործությունը կատարելու համար: Փաստաթղթերի կեղծումը, եթե կատարվել է ինչ որ հանցագործություն կատարելու կամ արդեն կատարված հանցագործությունը թաքցնելու նպատակով, չի կարող լինել հանցագործություն-եղանակ: Իսկ ահա նախապես կեղծ փաստաթղթի օգտագործումն իրենից ներկայացնում է տիպիկ հանցագործություն-եղանակ:[2] Այստեղից կարող ենք ենթադրել, որ փաստաթղթերի կեղծումը նման դեպքերում, անկախ նրա հետագա օգտագործումից, առաջացնում է

---

[1] *См.:* ***Кудрявцев В.Н.*** *Указ. соч. С. 211.*

[2] *См.:* ***Букалерова Л.А.*** *Уголовно-правовая охрана официального информационного оборота. М., 2006. С. 224–26*

իրական համակցություն այն հանցագործության հետ, որի կատարման համար արվել է: Կեղծ փաստաթղթի օգտագործումն այն կեղծողի կամ այլ անձի կողմից ինքնուրույն հանցակազմ չի ներկայացնում, քանի որ հանդես է գալիս որպես համապատասխան հանցագործության հանցագործություն-եղանակ և մեկ միասնական բարդ հանցագործության բաղադրիչ է: Այս կապակցությամբ հանցագործությունը, որը կատարվել է կեղծ փաստաթղթերի օգտագործման միջոցով, որակվում է որպես մեկ միասնական հանցագործություն, այլ ոչ թե համակցությամբ: Օրինակ՝ խարդախությամբ հափշտակությունը կարող է կատարվել խաբեությամբ՝ կեղծ փաստաթուղթ օգտագործելու ձևով, որտեղ հանցագործություն-եղանակը հանդես է գալիս որպես մեկ միասնական հանցագործության բաղադրիչ:

Պաշտոնեական կեղծիքի օգտագործումը այլ հանցանք կատարելու նպատակով՝ այդ կեղծումն իրականացնողի կողմից պետք է որակվի որպես պաշտոնեական կեղծիք և որպես այլ հանցագործություն (կամ այն կատարելու փորձի), որի կատարման համար այդ կեղծիքն իրականացվել է: Իսկ պաշտոնեական կեղծիքի օգտագործումն այն անձի կողմից, որն ինքը չի իրականացրել դա՝ որպես համապատասխան հանցագործության հանցագործություն-եղանակ՝ առանձին չի որակվի. այս դեպքում համակցությունը բացակայում է:

Երբեմն խնդիրներ են առաջանում այն հանցագործությունների որակման ժամանակ, որոնք կատարվում են զենքի ապօրինի շրջանառության միջոցով: Դրանց էությունը զենքի՝ ցանկացած կամ շրջանառության համար արգելված լինելու ընկալման մեջ է՝ բացառությամբ հարթափող, գազային զենքի, սառը զենքի, այդ թվում նաև նետվող:

Մի շարք հոդվածներում որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք է նախատեսված «զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների կիրառմամբ» հասկացությունը (հոդ. 129, մ. 2, կ. «3» -մարդու առևանգում, հոդ. 181, մ. 2 — ավազակություն, հոդ. 269, մ. 1 — խուլիգանություն և այլն): Օրենսդիրը նկատի ունի ոչ միայն շրջանառության համար արգելված զենքը: Այն կարող է լինել ցանկացած զենք, առավել ևս որ խոսվում է նաև այլ առարկաների մասին, որոնք կարող են օգտագործվել որպես զենք:

Ինչ վերաբերվում է ավազակախմբի կամ զինված կազմավորումների զինվածության հատկանիշին, ապա հաշվի առնելով այն, որ այդ հանցագործությունները առանձնապես ծանր և ծանր հանցագործություններ են, ապա անօրինական զենքը, մեր կարծիքով, ներառվում է նրանց մեջ և համակցությամբ չի որակվելու: Բոլոր ծանր և առնձնապես ծանր հանցագործությունների դեպքում անհրաժեշտ է որդեգրել այս մոտեցումը: Իսկ եթե զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրումը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության եղանակ է, ապա ապօրինի լինելու դեպքում այն պետք

է համակցությամբ որակվի: Օրինակ՝ խուլիգանությունը, որը նախատեսվում է ՔՕ հոդ. 269, մ.1-ով, դասվում է միջին ծանրության հանցանքների թվին, ուստի եթե այն կատարվել է զենքի կիրառմամբ, որն ապօրինի է, որակումը պետք է իրականացվի համակցությամբ :

Գնալով ավելի տարածված է դառնում բարձր տեխնոլոգիաների օգտագործումը որպես հանցագործություն-եղանակը: Գլխավոր դատախազների, ԱԴԾ ղեկավարների և ներքին գործերի նախարարների 2006 թ հունիսի 16-ի նիստում աշխարհի 50 երկրների միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ հիպերհանցագործությունների դեմ մղվող պայքարում ջանքերը միավորելու մասին: XXI դարում առաջին պլան է մղվում բարձր տեխնոլոգիաների օգտագործմամբ հանցավորությունը: Տեղեկատվական անվտանգության դեմ հանցագործությունները կատարում են երկու գործառույթ. հանդիսանում են ինքնուրույն հանցանքներ, որոնք որակվում են քրեական օրենսգրքի գլուխ 24-ով՝ («Հանցագործություններ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ») նախատեսված առանձին հոդվածով կամ որպես այլ հանցագործությունների կատարման եղանակներ:

Ամենից հաճախ համակարգչային հանցագործություններն օգտագործվում են հափշտակություններ ու շորրթումներ կատարելու համար: Սակայն հայտնի է ԱՄՆ-ում համակարգչի օգտագործման դեպք հիվանդի սպանության համար՝ կայքը կոտրելու և նրան դեղեր նշանակելու ճանապարհով: Համակարգչային հանցագործությունների որակումը հնարավոր է ինչպես իրական համակցությամբ, այնպես էլ որպես մեկ միասնական բարդ հանցագործություններ, որտեղ նրանք կատարում են հանցագործության եղանակի դեր: Համակարգչային հանցագործությունները կարող են միջոց դառնալ այնպիսի հանցագործություններ կատարելու համար, ինչպիսիք են շորթումը, պոռնոգրաֆիան, միջամտությունն անձնական կյանքին, ահաբեկչական ակտի սպառնալիքը, իշխանության ներկայացուցիչների ու ֆիզիկական անձանց կյանքին ու առողջությանը սպառնալիքն ու շատ այլ հանցագործություններ:

Համակցությունը և մեկ միասնական բարդ հանցագործությունը պետք է տարբերել ըստ այն հատկանիշի, թե արդյո՞ք համակցությունը եղել է իրական, այսինքն՝ սկզբում կատարվել է համակարգչային հանցագործությունը, իսկ հետո այն հանցագործությունը, հանուն որի օգտագործվել են բարձր տեխնոլոգիաները, թե՞ իդեալական: Իդեալական համակցությունը հանցագործություն-եղանակների դեպքում գործնականորեն բացառվում է. ակնհայտ է մեկ միասնական բարդ հանցագործությունը: Օրինակ՝ հաքերները մեկ առ մեկ կոտրել են բանկերի համակարգչային համակարգերը, այդ թվում նաև արտասահմանում, և հաղորդել են, որ որոշակի վճարի դիմաց կարող են ապահովել նրանց պաշտպանությունը: Տվյալ դեպքում համակարգչային

տեղեկատվության նկատմամբ անիրավաչափ հասանելիությունը դարձել է շորթման միջոց:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Հանցագործություն-եղանակը որպես այդպիսին է գնահատվում և առանձին չի որակվում, եթե ըստ ծանրության մեկ աստիճանով պակաս է հիմնական հանցագործությունից: Եթե հավասար է, կամ առավել ևս պատկանում է ավելի բարձր կատեգորիային, որակումը տեղի է ունենում ըստ հանցագործությունների համակցության:

2. Հանցագործություններ-եղանակները կարող են նաև նախատեսված չլինել որպես հանցակազմերի պարտադիր հատկանիշներ, բայց բովանդակությամբ այդպիսին հանդիսանում են, ուստի և մտնում են բարդ միասնական հանցագործության կազմի մեջ և չեն պահանջում որակում համակցությամբ: Դա ամենից առաջ վերաբերում է այնպիսի հատկանիշին, ինչպիսին է պաշտոնական լիազորությունների օգտագործումը, սակայն այն պայմանի առկայության դեպքում, որ պատկանում է հանցագործությունների ավելի ցածր կատեգորիային, քան հիմնական հանցագործությունն է: Այս պայմանի բացակայության դեպքում արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ. Գ.Ս.Ղազինյանը: